ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
Վ. ՋԻԼԱՎՅԱՆ

« 12 » 05 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000038

Ձեռնարկողը՝ ***«Սերգե-Ագոպիգ Դեր-Սահագության» ՍՊԸ***
«Սթարլայն» ՍՊԸ
ք. Երևան, Վաղարշյան 8/1
ք. Երևան, Արարատյան 90/9

Գործունեությունը՝ ***«Հին Երևան» թաղամասի՝ Բուզանդի փողոց 12, 14 և Արամի փողոց 11/1 հասցեների կառուցապատման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
ք. Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Դոնոյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000038

< 12 > 05 2020թ.

«Հին Երևան» թաղամասի՝ Բուզանդի փողոց 12, 14 և Արամի փողոց 11/1 հատվածի կառուցապատման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	«Սերգե-Ագոպիգ Դեր-Սահագույան» ՍՊԸ, «Սթարլայն» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության կատեգորիա՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան

«Սերգե-Ագոպիգ Դեր-Սահագույան» և «Սթարլայն» ՍՊ ընկերությունների կողմից նախատեսվում է Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Բուզանդի փողոց 12, 14 և Արամի փողոց 11/1 առանցքներով պարփակված տարածքներում կառուցել «Հին Երևան» թաղամասի «Բ» մասնաշենքը:

Գործունեությունն իրականացվելու է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականներով ամրագրված 3 հողակտորի վրա՝ 0.325948հա ընդհանուր մակերեսով, որի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ խառը կառուցապատման:

Նկարագրական մաս. Կառուցապատման ենթակա տարածքն իրենից ներկայացնում է կառուցապատ տարածք, որտեղ, համաձայն հայտի, արդեն իրականացվել են քանդման և մասնակի կառուցապատման աշխատանքները:

Տարածքը գտնվում է Երևանի կենտրոնական թաղամասում՝ հետիոտնային շարժման ամենաբանուկ հատվածում: Այն վերակառուցելու հիմնական նպատակն է՝ պատմական կառուցապատված տարածքների գեղագիտական բարելավումը, կանոնավոր կառուցապատմամբ արգելանոցային գոտու սահմանումը և ներգրավումը քաղաքային կենսագործունեության մեջ: «Հին Երևան թաղամասի» «Բ» հատվածի համար նախատեսվում է կառուցել ճարտարապետ Վասիլի Միրզոյանի նախագծով /1982թ./ հաստատված, խորհրդային տարիներին քանդված, Եկամտաբեր տունը, որը գտնվում էր Սասունցյան փողոցի վրա և հանդիսանում էր նշված ժամանակաշրջանի Երևանի ճարտարապետության

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ENVIRONMENTAL IMPACT EVALUATION CENTER
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS
02543763

լավագույն տիպիկ օրինակներից մեկը: Երկրորդ կառույցը ՝ Միրզոյան եղբայրների տունն է, որը գտնվել է Ամիրյան փողոց 16 հասցեում: Երրորդ կառույցը՝ ճարտարապետ Պոգրեբնոյի կողմից 1980թ. նախագծած Ս.Հախնազարյանի եկամտաբեր տունն է իր խանութներով, որը գտնվում էր Երևանի Քարահանքի թաղամասում:

Հայտի կազմման պահին արդեն իսկ իրականացվել են հետևյալ շինարարական աշխատանքները՝ փոսորակի վերջնական քանդելուց հետո կատարվել է փոսորակի հատակի համահարթեցում և տարածքի սահմանազատում Արամի փողոցի երկայնքով, խճի նախաշերտի իրականացում 36-45;E-F,36-40;F-J առանցքներով, բետոնի նախաշերտի կառուցում, ջրամեկուսացում, ամրանային կարկասների կառուցում և բետոնացում նշված առանցքներով, սյուների ամրանային կարկասների կառուցում և բետոնացում, ամրանավորված հատակների կառուցում, 9.6 նիշում միաձույլ ծածկի և հեծանների ամրանային կարկասների կառուցում և բետոնացում, 9.6-5.7 նիշում սյուների բետոնացում, 5.7 նիշում ծածկի և հեծանների ամրանային կարկասների կառուցում և բետոնացում, ամրանային կարկասների կառուցում 40-45;H-J առանցքներով:

Կառույցի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

Հողատարածքի ընդհանուր մակերես – 3.259,48քմ

Կառուցապատման մակերես – 2147,75քմ

Մայթերի ընդհանուր սալահատակ - 215,0քմ

Կանաչապատման մակերես – 859.83քմ:

Էլեկտրամատակարարման համար կառուցապատողները կդիմեն «ՀԵՑ» ՓԲԸ-ին տեխնիկական պայման ստանալու և համաձայն ԷՄՕԿ-ի 13.2 կետի պահանջների՝ էլեկտրոցանցին միանալու պատվեր ձևակերպելու համար: Գազամատակարարումը իրականացվելու է «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության համապատասխան տեխնիկական պայմանով: Ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ հետ կնքված պայմանագրի համաձայն:

Շինարարական աշխատանքների տևողությունը հաշվարկվել է 3 տարի:

Շինարարության ժամանակ բնառեսուրսից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու, կենցաղային նպատակների համար: Տեխնիկական նպատակով օգտագործման համար ջուրը բերվելու է պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով: Աշխատողների կենցաղային և խմելու նպատակով ջուրը մատակարարվելու է տարաներով: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (39 մարդ) և կազմել 1.014,12մ^3/շին.ժամ կամ 0.939մ^3/օր: Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 337,5մ^3/շին.ժամ կամ 0.75մ^3/օր: Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 1.351,62մ^3/շին.ժամ:

Երկաթբետոնե հիմքերի տեղադրման համար կատարվել է մոտ 34.000մ^3 ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ, որից 33.550մ^3 ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր, իսկ մնացած 450մ^3 օգտագործվել է որպես հետլիցք:

Գոյություն ունեցող շինությունների քանդման արդյունքում առաջացած 2.000 մ3 շինարարական աղբը տեղափոխվել է Սիլիկյան հանգույցի հիմնահողերի և շինաղբի աղբավայր, նախապես համաձայնեցնելով տեղական ինքնակառավարման մարմնի հետ:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում՝ կենցաղային աղբն է՝ 800-900կգ և շինարարական աղբը՝ 1.100մ^3: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման

ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի մոտակա աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարության ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով, որոնք կարող են առաջանալ հողային աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզվառելիքի այրման արդյունքում: Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունները կանխարգելելու և շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված է.

- փոշենստեցման նպատակով, ջրցանի իրականացում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ,

- ջրցանի հաշվարկում այնպես, որ չառաջանա մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

-շինարարական գործընթացում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, այդ տարածքներում սարքավորումների և մեքենաների պարբերաբար ստուգում և կարգաբերում,

-օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

-աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

-փոշու տարածումը կանխարգելելու նպատակով՝ սորուն նյութերի ժամանակավոր կուտակումների և շինհրապարակի համապատասխան բարձրությամբ թաղանթով ծածկում,

-շինարարական նյութերը տեղադրում բետոնապատ մակերեսի վրա,

-մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, Nox և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

-հոսքերաջրերի միավորում մեկ բակային ցանցում և միացում սելավային ջրացանցին,

-աշխատանքների ավարտից հետո տարածքների մաքրում և առաջացած թափոնների տեղափոխում տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,

-կանաչապատման իրականացում համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան հատկացնել 350 հազ. դրամ, ամբողջ շինարարության ընթացքում 1.050.000 հազ. դրամ:

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը կբարեկարգվի և կկանաչապատվի: Տարածքում տնկվելու են պերգոլա՝ 581,2մ^2, սիզամարգ՝ 124,8մ^2, դրվելու են ծաղկամաններ՝ 153,53գմ:

Պատճառաբանական մաս. Նախնական գնահատման հայտի փորձաքննական գործընթացին մասնակցել է կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը: Դիտողությունների և առաջարկությունների արդյունքում հայտը լրամշակվել է: Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անցկացվել են հանրային քննարկումներ գործունեության իրականացման վերաբերյալ, որը հանրության կողմից արժանացել է հավանության:

Գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական

աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ, ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
- Շինարարության ընթացքում անհրաժեշտ է պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:
- Հաշվի առնել կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից տրված եզրակացությունը՝ կառուցապատումն իրականացնել պահպանելով շենքերի նախագծված տեսքը, ինչը կապահովի տարածքին համահունչ կառուցապատում:
- Անհրաժեշտ է ապահովել քաղաքաշինության նախարարի 2014թ. հոկտեմբերի 14-ի N263-Ն հրամանով հաստատված «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» ՀՀՇՆ 30-01-2014 նորմերի և պահանջների պահպանումը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Սերգե-Ագոպիգ Դեր-Սահագույան» և «Սթարլայն» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված «Հին Երևան» թաղամասի՝ Բուզանդի փողոց 12, 14 և Արամի փողոց 11/1 հատվածի կառուցապատման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝ Հ. Ալեքսանյան